ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1288-Ա/2 23 սեպտեմբերի 2020 թ.

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2021» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Կազմակերպել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացվող «Արցախի հետ համագործակցության ծրագիր-2021» մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական թեմաների ցանկերում փոփոխությունների կատարման լիազորությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

Նախարար **Արայիկ Հարությունյան**

Հավելված 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2020 թ. սեպտեմբերի 23-ի
N 1288-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպում է «Արցախի հետ համագործակցության ծրագիր - 2021» ՄՐՑՈՒՅԹԸ:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ:

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությունից՝ աշխատանքային օրերին, ժամը 10:00 - 17:00 (հեռախոս՝ 21-01-40*115):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտե

Հավելված 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2020 թ. սեպտեմբերի 23-ի
N 1288-Ա/2 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՎԵՐ

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2021» ՄՐՑՈՒՅԹԻ

1. «Արցախի հետ համագործակցության ծրագիր-2021» մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Արցախի Հանրապետության կրթության և գիտության նախարարության միջև 2009 թվականի նոյեմբերի 15-ին կնքված «Գիտատեխնիկական ոլորտում համագործակցության մասին» պայմանագրի:

2. Կոմիտեն բնական գիտությունների բնագավառում «Ֆիզիկա և աստղագիտություն» (մասնագիտական դասիչը՝ 1.3), «Քիմիա» (մասնագիտական դասիչը՝ 1.4), «Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ» (մասնագիտական դասիչը՝ 1.5) և «Կենսաբանական գիտություններ» (մասնագիտական դասիչը՝ 1.6) մասնագիտություններով գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար 12 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի 3 կամ 4 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված գիտական թեմաներին (այսուհետ՝ Թեմա):

3. Խմբի կազմում ընդգրկվում է գիտական խորհրդատու (այսուհետ՝ Խորհրդատու), Խմբի ղեկավար (այսուհետ՝ Ղեկավար) և մեկ կամ երկու կատարող:

4. Խորհրդատու կարող է հանդիսանալ գիտական աստիճան ունեցող անձը, ով վերջին 5 տարիների ընթացքում գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառում ունի.

- առնվազն երկու գիտական հոդված՝ ազդեցության գործակից (այսուհետ՝ ԱԳ) ունեցող (ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների) ամսագրերում,
- կամ առնվազն չորս գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Arts&Humanities Citation Index (AHCI)», «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված պարբերականներում:

ԱԳ ունեցող ամսագրում տպագրված 1 հոդվածը համարժեք է միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում հրապարակված 2 հոդվածների:

- Խորհրդատուն պետք է հանդիսանա Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչ և Թեմայի իրականացման ընթացքում բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

5. Ղեկավար կարող է հանդիսանալ մինչև 70 տարեկան անձը (ում 70 տարին չի լրացել մինչև Մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետը), ով՝

- ունի գիտական աստիճան և վերջին 5 տարիների ընթացքում առնվազն մեկ գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Arts&Humanities Citation Index (AHCI)», «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված պարբերականներում:
- չունի գիտական աստիճան, սակայն վերջին 5 տարիների ընթացքում ունի առնվազն երկու գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում («Arts&Humanities Citation Index (AHCI)», «Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում, կամ «Scimago Journal & Country Ranking (SJR)») ընդգրկված պարբերականներում:

6. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ կատարող՝ ասպիրանտ, մագիստրոս, դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրատուրայի ուսանող, ում 35 տարին չի լրացել մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը: Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- ՀՀ և Արցախի զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ հավելյալ երկու տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ մեկ տարով:

7. Ղեկավարը և կատարող(ներ)ը պետք է հանդիսանան Արցախի Հանրապետության մշտական բնակիչներ և Թեմայի իրականացման ընթացքում բնակվեն Արցախի Հանրապետությունում:

8. Խորհրդատուն, Ղեկավարը և կատարող(ներ)ը չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացվող մեկից ավելի հայտերում:

9. Խմբի անունից հանդես է գալիս միայն Ղեկավարը:

10. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

11. Հայտը չի քննարկվում, եթե՝

- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմանները,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ այլ թեմայի/ծրագրի հետ,
- Ղեկավարի կողմից նախկինում իրականացված գիտական թեմայի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ առկա է բացասական եզրակացություն,
- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների,
- **Ղեկավարի կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատանք**:

12. Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

- *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ ____ ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

- *Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № ____.*

- *The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № ____.*

13. Մրցույթին մասնակցելու համար, մինչև 2020 թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ, փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22, ՀՀ գիտության կոմիտե) կամ էլեկտրոնային փոստով (info@scs.am) ՀՀ գիտության կոմիտե ներկայացնել հետևյալ փաթեթը.

- Ղեկավարի դիմումը (Հավելված N 2.1),

- Մրցույթի մասնակցության հայտը (Հավելված N 2.2)՝ սոսնձված ծրարով,

- Թեմայի իրականացման վայր հանդիսացող գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը,

- մինչև 35 տարեկան կատարող(ներ)ի

✓ անձնագրի և սոցիալական քարտի/հանրային ծառայությունների համարանիշի կամ նույնականացման քարտի պատճենը,

✓ ասպիրանտ կամ մագիստրատուրայի ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին,

✓ դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմի պատճենը,

✓ ՀՀ և Արցախի զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ զինվորական գրքույկի պատճենը,

✓ երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ համապատասխան փաստաթղթի պատճենը:

14. Հայտը ներկայացնել հայերեն՝ թղթային և էլեկտրոնային (խտասկավառակ) տարբերակներով:

15. Հայտի թղթային տարբերակը ներկայացնել A4 չափի թղթի վրա տպված, 12 տառաչափով, 1,5 միջտողային հեռավորությամբ, Unicode կոդավորմամբ հայերեն տառատեսակներով՝ պահպանելով աղյուսակների ամբողջականությունը: Էջերի

բոլոր կողմերից թողնել 0,3″ լուսանցք և հաջորդաբար համարակալել ներքևի աջ անկյունում: Հայտի էլեկտրոնային տարբերակը ներկայացնել Microsoft Word «.docx» ձևաչափով՝ մեկ ամբողջական փաստաթղթով, որը չպետք է գերազանցի 4 Mb-ը:

16. Թեմայի իրականացման ծախսերի նախահաշիվը կազմելիս օգտվել ուղեցույցից (Հավելված N 2.3):

17. Մրցույթի պայմանները բավարարող հայտերը տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով ձևավորվող մասնագիտական փորձագիտական խորհրդին՝ (այսուհետ՝ Խորհուրդ) գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

18. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի արդի վիճակը, նորույթը, իրականացման նախադրյալները, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, Նախահաշվի հիմնավորվածությունը, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, Ղեկավարի, կատարողների և Խորհրդատուի մասնագիտական համապատասխանությունը Թեմային և որակավորումը գիտության տվյալ մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

19. Փորձաքննությունն իրականացնելիս Խորհուրդը յուրաքանչյուր հայտի համար լրացնում է Կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը (Հավելված N 2.4):

20. Կոմիտեի և Խորհրդի կողմից հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

21. Խորհուրդը, Հայտերի գիտական փորձաքննության գնահատականների նվազման կարգով, ներկայացնում է Հայտերի գնահատականների վարկանիշային ցանկը:

22. Նախարարը, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Արցախի հետ համագործակցության ծրագիր» միջոցառման համար նախատեսված հատկացումների չափից, հաստատում է ֆինանսավորման

երաշխավորվող Թեմաների ցանկը, Ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

23. Կոմիտեն ապահովում է Մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին իրազեկումը:

24. Կազմակերպության տնօրենի (ռեկտորի) և Ղեկավարի միջև կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր, որտեղ նշվում է տնօրենի (ռեկտորի) իրավասությանը թողնված վերադիր ծախսերի չափը:

25. Ղեկավարը կատարող(ներ)ի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

26. Կոմիտեի, ֆինանսավորման երաշխավորված Թեմայի Խորհրդատուի և Ղեկավարի միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

27. Թեմայի իրականացման ընթացքում Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Թեմայի հետագա ֆինանսավորման վերաբերյալ: Թեմայի ավարտից հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ հաշվետվությունն ընդունելու մասին:

28. Թեմայի ավարտից հետո Խմբի անդամները (ներառյալ Ղեկավարը) տվյալ ծրագրի շրջանակներում պետք է ունենան առնվազն մեկ գիտական հոդված «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման առաջին, երկրորդ կամ երրորդ (Q1, Q2, Q3 quartile) քառորդում ընդգրկված ամսագրերում (https://www.scimagojr.com/journalrank.php):

29. 28 կետում նշված պայմանի չկատարելը/կատարելը կազդի հետագայում Կոմիտեի հայտարարած մրցութային ծրագրերին Խմբի անդամների կողմից ներկայացված գիտական թեմայի փորձագիտական գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթի առավելագույն գնահատականի հինգ տոկոսի չափով միավոր Ղեկավարի ընդգրկված լինելու դեպքում և մեկ տոկոսի չափով միավոր՝ Խմբի կատարողներից յուրաքանչյուրի դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթի առավելագույն գնահատականի ոչ ավել քան հինգ տոկոսի չափով միավոր: Հետագա մրցութային ծրագրերին Խմբի անդամների կողմից ներկայացված գիտական թեմայի փորձագիտական գնահատականի

նվազեցումը կչեղարկվի Թեմայի ավարտից հետո 28 կետի պայմանը բավարարելուն պես:

30. Թեմայի իրականացման ընթացքում Խմբի անդամները պետք է ապահովեն Թեմայի և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, գիտահանրամատչելի ամսագրերում հրապարակումներ, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն Խորհրդի կողմից ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

31. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և հաշվետվությունները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

Հավելված N 2.1
«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2021» մրցույթի հրավերի

ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻՆ
ՔԱՂԱՔԱՑԻ

_____
(անուն հայրանուն)
_____ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
_____
(հեռախոս)

Դ Ի Մ Ո Ւ Մ

Խնդրում եմ ընդունել «Արցախի հետ համագործակցության ծրագիր – 2021» մրցույթի «_____» վերնագրով հայտը:

Դիմող՝ _____ (_____)
(*ստորագրություն*) (*անուն ազգանուն*)

«____» _____ 2020թ.

Հավելված N 2.2
«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2021» մրցույթի հրավերի

ՀԱՅՏ

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2021» ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 2020թ. Ծածկագիր՝ 21T/AA-_____
(*լրացվում է ՀՀ գիտության կոմիտեում*)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի

- վերնագիրը
- մասնագիտական դասիչը
- բնույթը, հետազոտության տեսակը՝

հիմնարար		տեսական	
կիրառական		փորձարարական	

2. Հուշող (բանալի) բառեր

3. Խմբի գիտական խորհրդատուի ԱԱՀ (լրիվ)

4. Խմբի ղեկավարի ԱԱՀ (լրիվ)

5. Թեմայի իրականացման վայր հանդիսացող կազմակերպության

- լրիվ, կրճատ անվանումները
- կազմակերպաիրավական ձևը
- հասցեն
- հեռախոսը
- էլեկտրոնային հասցեն

6. Թեմայի կատարման ժամանակահատվածը _____ ամիս

7. Գիտահետազոտական խմբի անդամների թիվը

8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____ հազար դրամ

9. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ

10. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ

11. Խմբի գիտական խորհրդատուի ստորագրությունը

12. Խմբի ղեկավարի ստորագրությունը

13. Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ*

* *Համառոտ ներկայացնել նախագծի նպատակները*

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. ***Անոտացիա***

2. ***Խնդրի արդի վիճակի վերլուծությունը***

3. ***Թեմայի գիտական նպատակները և խնդիրները***

4. ***Հետազոտական ծրագիրը***

5. ***Իրականացման գիտական մեթոդները***

6. ***Օրացուցային պլանը (ըստ եռամսյակների)***

7. ***Խորհրդատուի հետ համագործակցության նախադրյալները, ինչպես նաև նպատակահարմարությունը և ակնկալվող արդյունքները***

8. ***Տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները***

9. ***Ակնկալվող արդյունքների քանակական և որակական ցուցանիշները***
(հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն))

10. ***Օգտագործված գրականության ցանկը***

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՄԱՍԻՆ

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
Հրատարակված	գիտական հոդվածներ (*քանակը*)
	մենագրություններ (*քանակը*)
2015-2020 թվականներին հրատարակված գիտական հոդվածները (*հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր*) (10-ից ոչ ավելի)	1)
	2)
	3)
	4)
	5)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
Ստացված օտարերկրյա դրամաշնորհները	1)
	2)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

_____

(գիտական խորհրդատուի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
Հրատարակված	գիտական հոդվածներ (*քանակը*)
	մենագրություններ (*քանակը*)
2015-2020 թվականներին հրատարակված գիտական հոդվածները (*հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր*) (10-ից ոչ ավելի)	1)
	2)
	3)
	4)
	5)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)
Ստացված օտարերկրյա դրամաշնորհները	1)
	2)
	(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

_____

(խմբի ղեկավարի ստորագրությունը)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ*

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը, ծննդավայրը	
Կրթությունը (*բուհ, մասնագիտություն, մասնագիտացում*)	
Որակավորումը (*դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս*)	
Գիտական աստիճանը, կոչումը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը, վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (*աշխատանքային, բջջային*)	
Էլեկտրոնային հասցե	
Նախագծին առնչվող գիտական հրապարակումները (*հեղինակներ, վերնագիր, ամսագիր, տարի, հատոր, էջեր*), 5-ից ոչ ավելի	1)
	2)
	3)
	4)
	5)

_____

(կատարողի ստորագրությունը)

* *Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար առանձին*

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Ծածկագիր՝ 21T/AA-_____

(լրացվում է ՀՀ գիտության կոմիտեում)

հազար դրամ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (*ներառյալ եկամտային հարկը*)						
ազգանուն, անուն, հայրանուն	2021 թ.			2022 թ.		
	անվանական գումար	ամիսների քանակ	պահանջվող գումար	անվանական գումար	ամիսների քանակ	պահանջվող գումար
1)		*12*			*12*	
2)		*12*			*12*	
3)		*12*			*12*	
4)		*12*			*12*	
Ընդհանուր գումար						

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում		
1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (*բոլոր ծախսերը հիմնավորվել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ*)	2021 թ.	2022 թ.
1)		
2)		
...		
Ընդհանուր գումար		
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (*հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ*)	2021 թ.	2022 թ.
1)		
2)		
...		
Ընդհանուր գումար		
3. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ	2021 թ.	2022 թ.
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	2021 թ.	2022 թ.

Խմբի գիտական խորհրդատու՝ _____ _____

(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)

Խմբի ղեկավար՝ _____ _____

(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____

(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(*ստորագրություն*) (*անուն, ազգանուն*)

Կ.Տ.

* *Օգտվել ծախսերի նախահաշիվը կազմելու ուղեցույցից (Հավելված N 2.3)*

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

* *Բացատրել և հիմնավորել ծախսերի նախահաշվի բոլոր կետերը*

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԿԱԶՄՄԱՆ

1. Ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ) ներկայացնել առանձին տարիների համար:

2. Ծախսերի 12-ամսյա առավելագույն գումարը նախատեսել.

- 4 անձից բաղկացած խմբի համար՝ 4 600 000 *(չորս միլիոն վեց հարյուր հազար)* ՀՀ դրամ,
- 3 անձից բաղկացած խմբի համար՝ 3 450 000 *(երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար)* ՀՀ դրամ*:*

3. Նախահաշվի «Աշխատանքի վարձատրություն» հոդվածը կազմելիս աշխատանքի ամսական վարձատրության միջին հաշվարկային չափն ընդունել 70 000 (*յոթանասուն հազար*) ՀՀ դրամ, ներառյալ եկամտային հարկը:

4. Աշխատանքի վարձատրության համար նախատեսվող 12-ամսյա առավելագույն գումարը նախատեսել.

- 4 անձից բաղկացած խմբի համար՝ 3 360 000 (*երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար*) ՀՀ դրամ,
- 3 անձից բաղկացած խմբի համար՝ 2 520 000 (*երկու միլիոն հինգ հարյուր քսան հազար*) ՀՀ դրամ:

Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալ չափից պակաս նախատեսելու դեպքում տարբերությունը կարող է օգտագործվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

5. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման կամ ծառայությունների ծախսեր: Բոլոր ծախսերը անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

6. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել Թեմայի ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար: Խմբի անդամների գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերը հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ: Գործուղումների

համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի և ոչ ավելի՝ քան ամսական 1 500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսվա ընթացքում):

7. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Վերադիր ծախսեր» ենթահոդվածով նախատեսվում է Կազմակերպության ղեկավարի իրավասությանը թողնվող գումարը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է Կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերի համար նախատեսվող 12-ամսյա առավելագույն գումարը նախատեսել.

- 4 անձից բաղկացած խմբի համար՝ 87 000 (*ութսունյոթ հազար*) ՀՀ դրամ,
- 3 անձից բաղկացած խմբի համար՝ 65 000 (*վաթսունհինգ հազար*) ՀՀ դրամ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը գրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:*
4	***Շատ լավ:*** *Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
3	***Լավ:*** *Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
2	***Միջին:*** *Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
1	***Վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
0	***Շատ վատ:*** *Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*

Հարցաշար

1.	**Արդի վիճակի վերլուծություն:** Որքանո՞վ է համապարփակ վերլուծված ոլորտի արդի վիճակը:	
2.	**Արդիականություն**: Որքանո՞վ է գիտական ծրագիրը համապատասխանում ոլորտի արդի վիճակին:	
3.	**Ծրագիր:** Որքանո՞վ են հստակ ձևակերպված գիտական ծրագիրը և նրա լուծվելիք խնդիրներն ու նպատակները:	
4.	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող գիտական թեման:	
5.	**Մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական թեմային:	
6.	**Համապատասխանություն:** Որքանո՞վ է գիտական թեման համապատասխանում տվյալ մասնագիտությանը:	
7.	**Նախագծի պլանավորում:** Որքանո՞վ են համապատասխանում գիտական թեմայի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն և որքանո՞վ են դրանք իրատեսական:	
8.	**Մարդկային ներուժ:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը թեմայի իրականացմանը:	
9.	**Համագործակցության նպատակահարմարություն:** Որքանո՞վ է խորհրդատուի ներգրավումը նպաստում գիտական թեմայի իրականացմանը:	
10.	**Միջգիտակարգային բնույթը:** Արդյո՞ք Թեմայի իրականացման ընթացքում նախատեսվում են միջգիտակարգային հետազոտություններ:	
11,	**Ազդեցություն:** Ի՞նչ ազդեցություն կունենա թեմայի հաջող կատարումը ԱՀ-ում տվյալ ուղղության զարգացման վրա:	
12.	**Արդյունքների տնօրինում:** Որքանո՞վ է հստակ ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը և որքանո՞վ են ակնկալվող արդյունքները համապատասխանում ֆինանսավորման ծավալներին (արդյունքների հրապարակում (ամսագրեր, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության կիրառություն (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
13.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն:	
14.	**Հետազոտության ղեկավարում:** Որքանո՞վ է համապատասխանում ղեկավարի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
15.	**Խմբի անդամների մասնագիտական որակավորում:** Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների (այդ թվում մինչև 35 տարեկան երիտասարդ մասնագետների) մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
16.	**Խորհրդատուի մասնագիտական որակավորում:** Որքանո՞վ է համապատասխանում Խորհրդատուի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
Մեկնաբանություն:		
	Փորձագետի գնահատականը (16 գնահատականների գումարը) **Մասնագիտական խորհրդի ընդհանուր գնահատական**	